Կարգապահական գործ թիվ ԿԳ-24164

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐՄԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Արաքս Վարդանյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վահե Աստվածատրյանի, Գուրգեն Թորոսյանի, Կարեն Խալաթյանի և Վահագն Քեշիշյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

մասնակցությամբ՝ դիմող Զարուհի Փոստանջյանի **(այսուհետ նաև՝ Դիմող),**

քննության առնելով փաստաբան Արման Համբարձումի Ներսիսյանի **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 3526), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Զարուհի Փոստանջյանը, դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ՝ նաև Պալատ**) հայտնել է, որ փաստաբան Արման Ներսիսյանը հանդիսացել է թիվ ԵԴ/9534/02/21 քաղաքացիական գործով հայցվորի ներկայացուցիչը:

Ըստ Դիմողի՝ 02.07.2024թ. ժամը 16:30-ի սահմաններում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում (Արաբկիր և Քանաքեռ-Զեյթունի նստավայր) նիստից հետո բռնկվել է վիճաբանություն, որի ընթացքում Փաստաբան Արման Ներսիսյանը խլել է Դիմողի բջջային հեռախոսը և քերծել մատը:

Դիմողի պնդմամբ՝ Փաստաբանը հրաժարվել է վերադարձնել հեռախոսը և վերադարձրել է այն հերթապահ կարգադրիչին:

Դիմողը 17.07.2024թ. ներկայացրած բացատրությամբ հավելել է, որ ՀՀ դատական դեպարտամենտ ներկայացրել է դիմում՝ խնդրելով տրամադրել տեսաձայնագրություններ:

Թիվ ԿԳ-24164-4-Ա
12.02.2025թ.

Բացի այդ, Զարուհի Փոստանջյանը նշել է, որ մատի վնասվածքի և բուժման վերաբերյալ տեղեկություններ կարող է տրամադրել բժիշկը, ով սույն վարույթի շրջանակներում կարող է հանդես գալ որպես վկա:

Վերոգրյալի հաշվառմամբ, Դիմողը խնդրել է Փաստաբանին ենթարկել կարգապահական պատասխանատվության:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 09.08.2024 թվականին Դիմողին առաջարկվել է «Փաստաբանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**) 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Դիմողը 18.08.2024 թվականի դիմումով խնդրել է իրեն տրամադրել հավելյալ ժամանակ ապացույցներ ներկայացնելու համար: Պալատի նախագահի 21.08.2024թ. թիվ 343-Ա որոշմամբ Դիմողի խնդրանքը բավարարվել է և վերջինիս տրամադրվել է լրացուցիչ ժամանակ ապացույցներ ներկայացնելու համար:

Դիմողը 02.09.2024թ. ներկայացրած բացատրությամբ, ըստ էության, պնդել է նախկինում արտահայտած դիրքորոշումը՝ մանրամասն ներկայացնելով դատական գործի նախապատմությունը, ինչպես նաև ներկայացրել է մի շարք ապացույցներ:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Արման Ներսիսյանին առաջարկվել է Օրենքի 39.2-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն ներկայացնել բացատրություն Զարուհի Փոստանջյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը 18.07.2024թ. ներկայացրած բացատրությամբ հայտնել է, որ հանդիսանում է հայցվորի ներկայացուցիչը թիվ ԵԴ/9534/02/21 քաղաքացիական գործով: Փաստաբանը նշել է, որ նիստի ընթացքում Զարուհի Փոստանջյանն անընդմեջ վիրավորական արտահայտություններ է կատարել հայցվորի, նրա ներկայացուցչի, ինչպես նաև ՀՀ իշխանությունների նկատմամբ:

Փաստաբանը տեղեկացրել է, որ նիստից հետո Զարուհի Փոստանջյանը գոռացել է դատարանով մեկ՝ վիրավորելով թե իրեն, թե իր վստահորդին, ինչին ի պատասխան փաստաբանը հորդորել է լռել: Այնուհետև, Դիմողը փորձել է սադրել և լուսանկարել Փաստաբանին, ինչի պատճառով վերջինս խոչընդոտել է ապօրինի նկարահանմանը:

Փաստաբանը նշել է, որ բռնություն չի գործադրել և Դիմողի մատը չի վնասել:

Վերոգրյալի հաշվառմամբ, փստաբանը խնդրել է մերժել կարգապահական վարույթի հարուցումը:

Սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով 08.08.2024թ.

Փաստաբանին առաջարկվել է Օրենքի 39.5 հոդվածի 5-րդ մասի համապատասխան գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Փաստաբանը 21.08.2024թ. ներկայացրած դիմումով հայտնել է, որ արդեն իսկ ներկայացրել է իրենից պահանջվող ապացույցները և այլ ապացույցների չի տիրապետում:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 31.04.2024թ. թիվ 317-Ա/ԿԳ-24164 որոշմամբ փաստաբան Արման Ներսիսյանի նկատմամբ Օրենքի **19-րդ հոդվածի 2-րդ կետի**, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետև նաև՝ Կանոնագիրք) 2.2.2, 5.1.2 ենթակետերի և 5.2.1 ենթակետի 1-ին պարբերության** խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

02.08.2024թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Գարիկ Հախնազարյանին (**այսուհետ՝ նաև Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Հանձնաժողովը 25.12.2024թ. թիվ ԿԳ-24164-3-Ա որոշմամբ բավարարել է Զ.Փոստանջյանի միջնորդությունը վկա հրավիրելու վերաբերյալ:

Սույն կարգապահական գործով որպես վկա են հրավիրվել Կառլեն Ապրեսյանը, ով, պատասխանելով Հանձնաժողովի անդամների հարցերին, հայտնել է դիրքորոշում այն մասին, որ Արաբկիրի նստավայրում ծառայության է եղել, երբ Զարուհի Փոստանջյանը մատը վնասված ներս է մտել: Այդ ժամանակ վկան Զ.Փոստանջյանին ցուցաբերել է մարդասիրական օգնություն՝ բժշկական լեկոպլաստ կպցնելով վերջինիս մատին: Հանձնաժողովի անդամի այն հարցին, թե ինչից է առաջացել վնասվածքը, վկան հայտնել է, որ չի կարող պատասխանել այդ հարցին, քանի որ գտնվել է ներսում:

Վկա Բաբկեն Ստեփանյանը հայտնել է, որ փաստաբաններից Արման Ներսիսյանը վերցրել է Զարուհի Փոստանջյանի հեռախոսը: Վկան հայտնել է, որ լսել է, թե ինչպես է Զարուհի Փոստանջյանն ասում «հեռախոսս տվեք, հեռախոսս տվեք», որից հետո Փաստաբանի ձեռքից վերցրել է հեռախոսը և փոխանցել Զ.Փոստանջյանին: Վկան հայտնել է, որ ականատես չի եղել որևէ վիճաբանության:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 02.10.2024թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված է համարվել, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (Արաբկիրի նստավայր) մոտակայքում 02.07.2024թ. ժամը 16:30-ի սահմաններում Փաստաբան Արման Ներսիսյանի և Դիմող Զարուհի Փոստանջյանի միջև տեղի է ունեցել վիճաբանություն, որի ընթացքում Դիմողը նկարահանել է Փաստաբանին, իսկ վերջինս խոչընդոտել է Դիմողի գործողություններին:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 03.10.2024թ.:

Հանձնաժողովի 18.12.2024թ. թիվ ԿԳ-24164-2-Ա որոշմամբ երկու ամիս ժամկետով՝ մինչև 17.02.2025 թվականը երկարաձգվել է թիվ ԿԳ-24164 կարգապահական գործի քննությունը:

Հանձնաժողովի նիստերը տեղի են ունեցել՝ 20.11.2024թ. ժամը 18:30-ին, 04.12.2024թ. ժամը 18:30-ին, 25.12.2024թ. ժամը 19:00-ին, 22.01.2025թ. ժամը 19:00-ին, 12.02.2025թ. ժամը 18:30-ին՝ ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք. Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստը.

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (Արաբկիր և Քանաքեռ-Զեյթունի նստավայր) մոտակայքում 02.07.2024թ. ժամը 16:30-ի սահմաններում Փաստաբան Արման Ներսիսյանի և Դիմող Զարուհի Փոստանջյանի միջև տեղի է ունեցել վիճաբանություն, որի ընթացքում Դիմողը նկարահանել է Փաստաբանին, իսկ վերջինս խոչընդոտել է Դիմողի գործողություններին: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրությամբ:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Արման Ներսիսյանը փաստաբան է հանդիսանում 06.12.2023 թվականից և 2023-2024թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Արման Ներսիսյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 2.2.2, 5.1.2 ենթակետերի և 5.2.1 ենթակետի 1-ին պարբերության պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Պալատի խորհրդի 05.01.2023թ. թիվ 1/21-Լ որոշմամբ հաստատված Հանձնաժողովի գործունեության կարգի 57-րդ կետի համաձայն՝ *խորհրդակցական սենյակում որոշումն*

ընդունվում է Հանձնաժողովի անդամների բաց քվեարկությամբ՝ Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն կեսով: (...)

Հանձնաժողովի նիստին ներկա գտնված 6 անդամները հեռացել են խորհրդակցական սենյակ որոշում կայացնելու: Խորհրդակցական սենյակում որոշումն ընդունվում է Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն կեսով, որպիսի պայմաններում քվեարկության արդյունքում սույն կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասով, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով, ինչպես նաև Հանձնաժողովի գործունեության կարգի 57-րդ կետով, Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Փաստաբան Արման Համբարձումի Ներսիսյանի (արտոնագիր՝ թիվ 3526) նկատմամբ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 2.2.2, 5.1.2 ենթակետերի և 5.2.1 ենթակետի 1-ին պարբերության խախտման հատկանիշներով հարուցված թիվ ԿԳ-24164 կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-24164-4-Ա
12 փետրվարի 2025թ.
ք.Երևան